

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

## ՄԱՅՐԵՆԻ

1. Գոյություն ունեն գրաճանաչության պատմական մեթոդներ, որոնք գործադրվել են հայ դպրոցում: Հետևյալներից ո՞րը այդ մեթոդներից չէ: (1 միավոր)

- 1) գրկապության կամ տառանունների
- 2) օրինակելի կամ նորմալ բառերի
- 3) վերլուծական-համադրական հնչյունավանկային և հնչյունաբառային
- 4) մաքուր բնական հնչյունների

2. Նշվածներից ո՞րը տարրական դպրոցում բառիմաստը բացատրելու եղանակներից չէ: (1 միավոր)

- 1) ընդհանուր հասկացության մասնավորումը
- 2) կոնկրետ հասկացության ընդհանրացումը
- 3) բառակազմական վերլուծություն կատարելը
- 4) հնչյունային վերլուծություն կատարելը

3. Տրվածներից ո՞րն է ուղղագրության ուսուցման մեթոդի անվանում: (1 միավոր)

- 1) վերլուծականը
- 2) համադրականը
- 3) ընդօրինակմանը
- 4) նախագծայինը

4. Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա: (1 միավոր)

- 1) արջի ծառայություն – մեկի համար արված գործ, որ օգուտի փոխարեն վնաս է բերում
- 2) առաջին ջութակ նվագել – որևէ գործի մեջ ղեկավար դեր խաղալ
- 3) Ռուբիկոնն անցնել – իրեն անպարկեշտ պահել
- 4) քավության նոխազ – անմեղ զոհ՝ ուրիշների հանցանքը մաքրելու համար

**5. Տրված պնդումներից ո՞րն է սխալ: (1 միավոր)**

- 1) Բառասկզբի **ռ** տառի ուսուցումը պետք է իրականացվի հնչյունից դեպի տառը գնացող հաջորդականությամբ:
- 2) Գրաձանաչության նախաայբբենական շրջանում աշակերտը պետք է սովորի տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները:
- 3) Առաջին դասարանի աշակերտը պետք է կարողանա տարբերակել ձայնավոր հնչյունների արտահայտման 8 տառերը:
- 4) Վերլուծական վարժությունները կիրառվում են լեզվական նյութի ուսումնասիրման կշռադաստման փուլում:

**6. Կարդալու տրված տեսակներից նշել այն 2-ը, որոնք կարդալու որակական հատկանիշներ են: (2 միավոր)**

1. դերերով
2. արտահայտիչ
3. շարունակելով
4. սահուն
5. բարձրաձայն
6. կանգառներով (մեկնաբանելով)
7. ընտրովի

**7. Նշել այն 2 պնդումները, որոնք սխալ են: (2 միավոր)**

1. Արագ կարդալը լավ կարդալու որակներից մեկն է:
2. Տարրական դպրոցում ուսումնասիրվող մանրապատում ստեղծագործություններ են առածը, ասացվածքը, առակը, հանելուկը:
3. Գրաձանաչության շրջանում աշակերտի համար ավելի հեշտ է արտագրել ձեռագիր նյութից, քան տպագիր:
4. Էվրիստիկ գրույցի ժամանակ ուսուցիչը տալիս է աշակերտների մոտ ծագած հարցերի պատասխանները:
5. Հայերենի ոչ բոլոր տառերի ուսուցումը պետք է իրականացվի հնչյունից դեպի տառը գնացող հաջորդականությամբ:

6. Նախապատրաստական գրույցի տեսակն առավելապես կիրառվում է ԽԻԿ համակարգով կազմակերպվող դասի խթանման փուլում:
7. Մարզողական վարժությունները կիրառվում են լեզվական նյութի ուսումնասիրման ԽԻԿ համակարգի իմաստավորման փուլում:

**8. Նշել այն 2 տարբերակները, որոնցում բաղադրյալ հատուկ անվան գրության սխալ կա: (2 միավոր)**

1. Սողոմոն Իմաստուն, Վանա լիճ
2. Թաղևոս Առաքյալ, Շիրակի դաշտավայր
3. Երևանի հանրապետության հրապարակ, Ժաննա դը Արկ
4. Վարդավառի տոն, Սահմանադրության օր
5. Մարշալ Բաղրամյան պողոտա, «Մայրական փառք» շքանշան
6. Ազգային հերոսի կոչում, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս

**9. Նշել այն 2 պնդումները, որոնք ճիշտ են: (2 միավոր)**

1. *Մի՛ գրեցեք, մի՛ վագեցեք* բայաձևերը ճիշտ են կազմված:
2. Հեքիաթները լինում են 3 տեսակի՝ իրապատում, հրաշապատում և կենդանական:
3. Բառի մեջ տառերը և հնչյունները քանակով կարող են չհամապատասխանել:
4. Ածանցները և վերջավորությունները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում:
5. Բառասկզբում *օ* արտասանելիս առանց բացառության գրվում է *օ* տառը:
6. Ուղղախոսությունը ճիշտ արտասանելու և գրելու կանոնների ամբողջությունն է:
7. Ածանցավոր բառերն ունենում են միայն մեկ արմատ և միայն մեկ ածանց:

**10. Նշել այն 2 պնդումները, որոնք ճիշտ են: (2 միավոր)**

1. *Ություն* ածանց ունեցող բառը կարող է լինել գոյական կամ ածական:
2. *Մ-ից, n-ից* հետո լսվող *յ* ձայնակապը երբեմն գրվում է, երբեմն՝ ոչ:
3. Հայերենի բոլոր գոյականները հոլովվում են *ի, վա, ան, ոջ, ու, ց* արտաքին կամ *ա, ռ* ներքին հոլովումներով:
4. *Տիկին, պարոն, անձ* բառերի հոգնակին կարող են կազմվել 2 ձևով:
5. Բոլոր միավանկ բառերի հոգնակին կազմվում է *եր* վերջավորությամբ:
6. Կան գոյականներ, որոնք որպես հասարակ անուն հոլովվում են մի հոլովմամբ, իսկ որպես հատուկ անուն՝ մեկ այլ հոլովմամբ:
7. Բաղաձայնով վերջացող բառերը երբեք չեն կարող ստանալ *ն* որոշիչ հոդ:

**11. Նշել այն 3 շարքերը, որոնց բոլոր բառերի հոգնակին կազմվում է *ներ* վերջավորությամբ: (3 միավոր)**

1. վարչապետ, բարեկամ, դաշտավայր
2. սարալանջ, չափանիշ, լճակ
3. լուսամուտ, հարս, նախարար
4. տոնածառ, սպա, այգի
5. հեռուստացույց, փոքրատառ, ուղեբեռ
6. բաղաձայն, սառցալեռ, խմբագիր
7. հայրենասեր, ձուկ, որդի
8. ավետաբեր, ջրափոս, ծունկ

**12. Նշել այն 3 նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա: (3 միավոր)**

1. Քարափի մոտ տեղ-տեղ բարձրանում են դարավոր ընկուզենիները, որոնց նայելով՝ Վարագը, չգիտես ինչու, հիշում է պապին:
2. Երբ ծնվեց Երեմիան՝ Մարգարի ու Ալխաթունի տասներկուերորդ զավակը ծնողները հազիվ էին ծայրը ծայրին հասցնում:

3. Անցնելով պարսպի ամբողջ երկարությամբ՝ նա վերջապես կանգ առավ այն խրճիթի լուսամուտի տակ, որտեղից առկայծում էր բեկբեկուն լույսը և ներս նայեց:
4. Լսե՞լ էք էն թախճալի ճռռոցը, որ երփներանգ ծաղիկների բուրմունքի ու կանաչի թարմության հետ խառնված՝ հոսում է գարնան դաշտերի երեսով:
5. Տանտերը, ձեռքը դնելով լայն բացված գրքի էջերի վրա, դանդաղ շուռ տվեց գլուխը և սևեռուն հայացքով նայեց այցելուին:
6. Նա լսեց, ցնցվեց, նայեց վարից վեր՝ ձեռքով վախվորած մի բացասական շարժում անելով:
7. Թվում է՝ հիմա լսում եմ այդ լալկան դողանջները, և սրտովս մի սարսուռ է անցնում:

**13. Նշել այն 3 շարքերը, որոնցում ուղղագրական սխալով բառ կա: (3 միավոր)**

1. խաղողօրհներք, Եղիագար, վայրկյան
2. ակնդետ, գահնկեց, լուսնէջք
3. երփնավառ, Իսրայել, կոթնել
4. կմախք, հախճապակի, վեհապանծ
5. ապաշխարհանք, ագեվագ, ուղեմուրր
6. աշխույժ, անբարտավան, անպաճույճ
7. բարբառ, աքիլլեայան, լուսնկա
8. վաղորդայն, բնօրրան, որևիցե

**14. Նշել այն 3 պնդումները, որոնցում սխալ կա: (3 միավոր)**

1. **Հիշեցրի, անցկացրի** բայաձևերը ճիշտ են կազմված:
2. Անձանոթ բառերի ու դարձվածքների բացատրությունները կարող են տրվել նաև բնագրի ընթերցումից առաջ:
3. **Ոչ ոք** դերանունը որոշիչ հոդ **չի** կարող ստանալ:
4. Նշվածներից բոլորը գրույցի տեսակներ են ըստ անցկացման ձևի՝ նախապատրաստական, էվրիստիկ, ներգործող, ամփոփիչ:

5. Ինքնաթելադրությունը ստեղծագործական թելադրության տեսակներից է:
6. Տարրական դասարաններում կիրառվում են մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործական փոխադրության տեսակները:
7. Առարկայի կամ երևույթի նկարագրությունը դատողական խոսքի տեսակ է:
8. Հայերենում շեշտը կայուն-շարժական է:

**15. Նշել այն 3 շարքերը, որոնց բոլոր բառերը միմյանց հոմանիշ են: (3 միավոր)**

1. բիրտ, դժնյա, անողորք, անագորույն
2. մարմնեղ, թիկնեղ, հաղթանդամ, պարթևահասակ
3. խոտոր, շեղ, սխալ, թյուր
4. կասկածել, տարակուսել, երկմտել, երկնչել
5. դալուկ, գունատ, դժգույն, դժխեմ
6. միալար, անընդհատ, անդուլ, անձկալի
7. արդար, անկողմնակալ, աչառու, շիտակ
8. գովել, դրվատել, ներբողել, ամոքել
9. վախկոտ, թուլամորթ, վեհերոտ, եսասեր

#### ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

**16. Քանի՞ հազարյակ, քանի՞ տասնյակ է պարունակում 2002400 թիվը: (1 միավոր)**

- 1) 0 հազարյակ, 40 տասնյակ
- 2) 2 հազարյակ, 0 տասնյակ
- 3) 2002 հազարյակ, 200240 տասնյակ
- 4) 2002 հազարյակ, 0 տասնյակ

**17. Ինչի՞ է հավասար թվի 1/5 մասը, եթե այդ թվի ութապատիկը 880 է: (1 միավոր)**

- 1) 1408
- 2) 22
- 3) 550
- 4) 176

18. Ո՞ր շարքի բոլոր հասկացություններն են մեծությունների չափման միավորներ: (1 միավոր)

- 1) ժամ, քառակուսի-սանտիմետր, լիտր
- 2) կիլոգրամ, հեկտար, արագություն
- 3) զանգված, մետր, վայրկյան
- 4) դեցիմետր, քառակուսի մետր, ժամանակ

19. Ո՞ր գումարն է միայն կարգային գումարելիների գումար: (1 միավոր)

- 1)  $8 \text{ հազ.} + 4 \text{ հ.} + 3 \text{ տ.}$
- 2)  $8\,000 + 420 + 30 + 9$
- 3)  $7 \cdot 1000 + 3 \cdot 100 + 99 + 1$
- 4)  $10\,000 + 3 \cdot 1000 + 199 + 1$

20. Ո՞ր համարի գրառման մեջ նվազելիի տասնավորը փոքր չէ հանելիի համապատասխան կարգի միավորների քանակն արտահայտող թվից: (1 միավոր)

- 1) 573-171
- 2) 673-181
- 3) 403-313
- 4) 100-99

21. 10 վագոնից կազմված էլեկտրագնացքը, որի մեկ վագոնի երկարությունը 16 մ է դիտողի կողքով անցավ 8 վայրկյանում: (2 միավոր)

- 1) Որքա՞ն է էլեկտրագնացքի արագությունը (արտահայտել մետր-վայրկյանով):
- 2) Որքա՞ն ժամանակում դիտողի կողքով կանցնի էլեկտրագնացքը, եթե նրա վագոնները ավելացնենք 5-ով (արտահայտել վայրկյանով):

22. Նշել այն 2 տեսական դրույթները, որոնք ընկած են «Հաշվել 37.3 արտահայտության արժեքը» առաջադրանքի կատաման հիմքում: (2 միավոր)

1. արտադրիչներից մեկի ներկայացում կարգային գումարելիների գումարի տեսքով
2. Արտադրիչներից մեկի ներկայացում հարմար գումարելիների գումարի տեսքով
3. գումարը թվով բազմապատկելու հաշվեկանոն
4. միանիշ թվի կազմություն
5. թիվը գումարով բազմապատկելու հաշվեկանոն
6. թվին գումար ավելացնելու հաշվեկանոն



**23. Պարկուր կա 6 կարմիր, 11 կանաչ և 13 դեղին խնձոր: Նշել այն 2 պնդումները, որոնք ճիշտ են: (2 միավոր)**

1. Ամենաքիչը 18 խնձոր պետք է վերցնել, որ համոզված լինես, որ դրանցից առնվազն մեկը դեղին է:
2. Ամենաքիչը 17 խնձոր պետք է վերցնել, որ համոզված լինես, որ դրանցից առնվազն մեկը դեղին է:
3. Ամենաքիչը 15 խնձոր պետք է վերցնես, որ համոզված լինես, որ դրանց մեջ կա առնվազն մեկական կանաչ և կարմիր խնձոր:
4. Ամենաքիչը 25 խնձոր պետք է վերցնել, որ համոզված լինես, որ դրանց մեջ կա առնվազն մեկական կանաչ և կարմիր խնձոր:
5. Ամենաքիչը 24 խնձոր պետք է վերցնել, որ համոզված լինես, որ դրանց մեջ բոլոր գույներից առնվազն մեկական խնձոր կա:
6. Ամենաքիչը 7 խնձոր պետք է վերցնել, որ համոզված լինես, որ դրանցից առնվազն մեկը կարմիր է:

**24. Արտադրամասերում 1550 լ ծիրանի հյութը լցրեցին 5լ և 2լ տարողությամբ 400 ամանների մեջ: 5լ տարողությամբ ամաններով հյութն ուղարկեցին պահեստ, իսկ 2լ տարողությամբ ամաններովը՝ խանութ: (2 միավոր)**

1. Քանի՞ լիտր հյութ ուղարկեցին պահեստ
2. Քանի՞ աման ուղարկեցին խանութ:

**25. Աշակերտը եռանիշ թվերից ընտրել է որևէ մեկը, դրանից հանել է 7 և պարզել, որ ստացված թիվը բաժանվում է 7-ի: Նա այդ նույն՝ ընտրված թվից հանել է նաև 11 և պարզել, որ ստացված նոր թիվը բաժանվում է 11-ի: (2 միավոր)**

1. Գտնել խնդրի պայմաններին բավարարող ամենափոքր եռանիշ թիվը:
2. Քանի՞ այդպիսի եռանիշ թիվ գոյություն ունի:

**26. Նշել այն 3 տարբերակները, որոնցում նվազելիի կարգային թվանշանները փոքր չեն հանելիի համապատասխան կարգային թվանշաններից: (3 միավոր)**

1. 457-357
2. 582-473
3. 600-500
4. 1000-999
5. 2024-2023
6. 321-129
7. 998-889

**27. Նշել այն 3 դատողությունները, որոնք ոչ ճշմարիտ են: (3 միավոր)**

1. Քառակուսին այն քառանկյունն է, որի բոլոր կողմերը հավասար են:
2. 0-ն կարգային միավոր չէ:
3. Ցանկացած ուղղանկյուն անկյունագծերով բաժանվում է չորս հավասար եռանկյունների:
4. 1դ<sup>2</sup>-ն 10 սմ կողմով քառակուսու մակերեսն է:
5. Երեք հատվածից բաղկացած ցանկացած պատկեր եռանկյուն է:
6. Բնական թվի որևէ բաժանարար նաև այդ նույն թվի պատիկ է:
7. 0-ն զույգ թիվ է:

**28. Արմենը, Կարենը և Արթուրը միասին կերան 20 բանկա մուրաբա: Արմենը կերավ 8 բանկա մուրաբա ավելի, քան Արթուրը: Արմենն ու Արթուրը միասին կերան 16 բանկա մուրաբա ավելի, քան Կարենը: (3 միավոր)**

1. Քանի՞ բանկա մուրաբա կերավ Արմենը:
2. Քանի՞ բանկա մուրաբա կերավ Կարենը:
3. Քանի՞ բանկա մուրաբա են կերել Արմենը և Արթուրը միասին:

**29. Ապակի պատրաստելու համար անհրաժեշտ է 25 մաս ավազ, 9 մաս սոդա և 5 մաս կիր: (3 միավոր)**

1. Քանի՞ կգ սոդա է անհրաժեշտ 195 կգ ապակի պատրաստելու համար:
2. Քանի՞ կգ ավազ է պետք 390 կգ ապակի պատրաստելու համար:
3. Քանի՞ կգ կիր կպահանջվի 1170 կգ ապակի պատրաստելու համար:

**30. Ունենք երկու ուղղանկյունաձև հողամաս: Դրանցից յուրաքանչյուրի լայնությունն էլ 35մ է, իսկ մակերեսների գումարը 14000մ<sup>2</sup> է: Մի հողամասի երկարությունը մյուսինից 80մ-ով ավելի է: (3 միավոր)**

1. Որքա՞ն է փոքր հողամասերի մակերեսը: (արտահայտել քառակուսի մետրով)
2. Որքա՞ն է մեծ հողամասի երկարությունը: (արտահայտել մետրով)
3. Մեծ հողամասի մակերեսի կեսը փոքր հողամասի մակերեսի մեկ քառորդից քանի՞ անգամ է մեծ:

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

31. Ո՞րն է երկրագնդի ամենամեծ կղզին: (1 միավոր)

- 1) Կուբան
- 2) Գրենլանդիան
- 3) Կրետեն
- 4) Մադագասկարը

32. Ի՞նչ է կոչվում երկրագնդի ցամաքի՝ ջրով լցված այն ընդարձակ գոգավորությունը, որը օվկիանոսի մաս է: (1 միավոր)

- 1) ծով
- 2) լիճ
- 3) գետ
- 4) նեղուց

33. Նշվածներից ո՞րն է տորֆի հիմնական հատկությունը: (1 միավոր)

- 1) ամրությունը
- 2) ջրակայունությունը
- 3) ճկունությունը
- 4) դյուրավառությունը

34. Օդի հորիզոնական տեղաշարժը կոչվում է՝ (1 միավոր)

- 1) ամպրոպ
- 2) քամի
- 3) կայծակ
- 4) մակընթացություն

35. Տրվածներից ո՞րն է մայրցամաքի անվանում: (1 միավոր)

- 1) Եվրոպա
- 2) Ասիա
- 3) Աֆրիկա
- 4) Ամերիկա